



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center for
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության
բարեփոխման նախաձեռնություն

Աշխատանքային փաստաթուղթ 1
Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ
փաստաթղթերի շարք

Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում

Դոկտոր Վլադո Վիվոդա

Քուինզլենդի համալսարան

Կայուն հանածոների ինստիտուտ

Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական
պատասխանատվության կենտրոն

Դոկտոր Ջոնաթան Ֆուլչեր

Քուինզլենդի համալսարան

Թ.Ս. Բիրնի անվան իրավաբանության բաժին

Փետրվար 2017

mlri.crm.aua.am

Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում

Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆուլչեր (2017)

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք

Աշխատանքային փաստաթուղթ 1

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հիմնաբառեր` Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան,

Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում, Անվտանգություն

Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://mlri.crm.aua.am>:

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊՌԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://crm.aua.am>:

Ինչպես հղում անել այս զեկույցին

Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 1, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.aua.am>:

Ներածություն

Հանքարդյունաբերության ոլորտն աշխարհում թափոնների ամենամեծ արտադրողն է՝ տարեկան 70 մլրդ տոննա: Թափոնների հեռացման կայուն տարբերակ չունեցող հանքը կենսունակ հանք չէ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում տեխնոլոգիական զարգացումներն ու փոփոխությունները կարգավորող համակարգերում թափոնների կառավարման առումով տեղի են ունեցել են զգալի փոփոխություններ:

Հանքարդյունաբերական թափոնների կառավարումը համաշխարհային խնդիր է: Օրինակ, Կալիֆոռնիայում կան հազարավոր լքված հանքեր: Այնպիսի թափոններ, ինչպիսիք են հանքերի թթվային ջրահեռացման /դրենաժ/ թափոնները, զգալի վնասակար ազդեցություն են ունենում ջրային կյանքի վրա: Մետաղական թափոնները նպաստում են մետաղական նյութերի թափանցմանը մեծ ջրային ուղիներ և ամբարտակներ: Հանքերի թթվային ջրահեռացումը /դրենաժ/ երկար գործընթաց է և նաև շատ ծախսատար է այն մաքրելը, նույնիսկ եթե այն ենթակա լինի վերջնական վերականգնման:¹ Ավստրալիայում կան նման խնդիրներ:²

Հանքերի վերականգնման աշխատանքները շատ թանկ են և այդ ծախսերը տարեցտարի ավելանում են: Փոքր հանքարդյունաբերական ընկերությունները օրենսդրությունը դիտարկելիս փորձում են պարզել, թե ինչ խնայողություններ կարելի է անել հետևելով վերականգնողական աշխատանքների մասին պահանջներին: Թեև առաջատար վերականգնողական աշխատանքները հանքարդյունաբերական զարգացած տարածքներում արդեն չափանիշ են դարձել, այդ վերականգնողական աշխատանքներից եկամուտներ գոյանում: Արդյունքում այն դասակարգման համակարգերը, որոնք կիրառվում են հանքարդյունաբերական թափոնների սահմանման համար, հաճախ հանքարդյունաբերողի կողմից մեկնաբանվում են հոգուտ իրեն՝ նպատակ ունենալով այս ծախսերի վրա գումար խնայել:

Այս պատճառով անհրաժեշտություն է առաջանում թափոնների դասակարգման համակարգերը նախագծել այնպիսի հստակությամբ և ճշգրտությամբ, որպեսզի օրենքները հնարավոր չլինեն հեշտությամբ շրջանցել: Երբ հանքարդյունաբերողը կարողանում է ներկայացնել այնպիսի իրավական հիմնավորում, որը հնարավոր է դարձնում միջոցներ խնայելը թափոնների կառավարման վրա, ապա դրա շրջակա միջավայրի վրա կարող էունենալ զգալի վնասակար հետևանքներ: Արդյունքում

¹ #13397 Կալիֆոռնիայի օրենսդիրի կողմից կատարված օրենսդրական ուսումնասիրության արդյունքները,

տես՝ http://www.waterboards.ca.gov/centralvalley/water_issues/mining/water_board_mining_laws_req.pdf:

² Տես՝ <http://theconversation.com/what-should-we-do-with-australias-50-000-abandoned-mines-18197>:

հանքարդյունաբերողը միգուցե կարողանա խուսափել պատասխանատվությունից կամ սահմանափակի բնապահպանական վնասի դիմաց հնարավոր տուգանքների չափը, քանի որ հանքարդյունաբերական թափոնների դասակարգման մասին կարգավորումը լավ ձևակերպված չէ:

Առկա իրավիճակը Հայաստանում

Ընդերքի մասին օրենսգիրքն իր մեջ ներառում է հանքարդյունաբերական թափոնների մասին լայն դրույթներ, որոնք հանքարդյունաբերողից պահանջում են «ապահովել հանքարդյունաբերական թափոնների մշակումը, գնահատումը, վնասագերծումը և նվազեցումը»՝ միևնույն ժամանակ «պահպանելով թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման և թաղման նորմերն ու կանոնները»: Հետագա կանոնակարգման համար օրենսգիրքը հղում է կատարում թափոնների մասին օրենքի վրա, որը վերջին անգամ լրացվել է 2015թ-ին: Թափոնների մասին օրենքը սահմանում է թափոնների կառավարման (այդ թվում՝ հանքարդյունաբերական թափոններ) մասին քաղաքականության առանցքային սկզբունքները, նպատակ ունենալով՝

- Սահմանել հիմնական պայմաններ, պահանջներ և կանոններ բնապահպանական առումով անվտանգ թափոնների կառավարում իրականացնելու համար,
- Ապահովել թափոնների նվազագույն հեռացում և դրանց կատարելագործված կիրառում տնտեսական գործունեության մեջ, և
- Նվազագույնի հասցնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների վտանգավոր ազդեցությունը:

Ընդերքի մասին օրենսգիրքը ծրագրի հայտ ներկայացնողից նաև պահանջում է ներկայացնել հանքի փակման պլան, որը պետք է նաև ներառի մշտադիտարկման պլան:

Չնայած, որ թե՛ ընդերքի մասին օրենսգիրքը, թե՛ թափոնների մասին օրենքը լրացումների են ենթարկվել 2015թ-ին՝ ընդգրկելով հանքարդյունաբերական թափոնների մասին որոշակի տերմինաբանություն (օրինակ՝ հանքարդյունաբերական թափոնների, պոչանքների և ծանրաբեռնվածության մասին սահմանումներ), երկու օրենքներն էլ չափից շատ ընդհանրական են և չեն ներառում թափոնների կառավարման մանրամասն կանոնակարգումներ և ուղեկիշներ, այդ թվում, օրինակ, բնապահպանական առումով գործունեության գնահատման չափանիշներ, հանքարդյունաբերական թափոնների դասակարգում կամ անվտանգության գործոններ ամբարտակների պատերի /dam walls/ խափանման պարագայում, կամ այլ ասպեկտներ, որոնք օգնում են նվազեցնել կայունության ֆիզիկական ռիսկերը: Չկա նաև որևէ

կոնկրետ նկարագրություն պոչամբարներին վազագույն տեխնիկական անվտանգության մշտադիտարկման, հսկման և ստուգման պահանջների մասին:³

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (ՏԿՄԻՆ) պատասխանատու է ընդերքօգտագործման թույլտվության համար հայտերի անվտանգության փորձաքննության համար, այդ թվում՝ պոչամբարների տեխնիկական և անվտանգության կողմերի գնահատման համար: Պոչանքների ամբարման կառույցների (ՊԱԿ) շինարարությունն ու թույլատրությունն իրականացվել են առանց ռիսկերի պատշաճ գնահատման՝ կապված տեխնիկական ոչ պատշաճ կարողությունների և կանոնակարգման բացերի հետ: Կանոնակարգման բացի առումով շարունակում է անհասկանալի մնալ պոչամբարների կառուցման թույլատրման հստակ գործընթացը: Պոչամբարների նախագծի և ռիսկերի գնահատումը անհրաժեշտ են որպես ծրագրային մակարդակով բնապահպանական գնահատման մաս: Այս առումով ՏԿՄԻՆ-ը պատասխանատու է կարգավորման և ռիսկերի գնահատման համար: Թե ՏԿՄԻՆ-ում, և թե համապատասխան պետական այլ հաստատություններում չկա փորձաքննության պատշաճ մակարդակ պոչամբարների կառուցման և կառավարման հարցերի առումով:⁴

Պասակարգման համակարգեր. լավագույն փորձի հիմունքներ

Հանքարդյունաբերական թափոնների դասակարգման համակարգ պետք է կազմված լինի հետևյալ կետերից.

1. Թափոնի տեխնիկական (երկրաբանական, երկրատեխնիկական և երկրաքիմիական) բնութագիրը որոշելու միջոց,
2. Թափոնի տեսակի ներկայացրած վտանգի բնութագրի հստակ շարադրում (թափոնների հետ ոչ պատշաճ վարվելու դեպքում ազդակիր շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը), և
3. Թափոնների կառավարման լավագույն գործնական միջոցները:⁵

³Համաշխարհային բանկ (2016թ), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#) (Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում), ապրիլ.

⁴Նույն տեղում:

⁵Կազմվել է Ավստրալիային Քուինզլենդ և Նոր Հարավային Ուելս նահանգների /ԼՅՈՒ/ և Եվրոպական միության թափոնների դասակարգման սխեմաներին հղում անելով: ԼՅՈՒ սխեման ստեղծում է թափոնների կարգեր՝ հիմնվելով մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին նրանց ներկայացրած ռիսկի աստիճանի վրա: Տես՝ *Բնապահպանական գործողությունների պահպանման ակտ*, 1997թ /ԼՅՈՒ/, <http://www.legislation.nsw.gov.au/#/view/act/1997/156>.

Գործնականում սա նշանակում է՝ կարգավորում յուրաքանչյուր փուլում: Հանքարդյունաբերության ոլորտի փորձը որպես ամբողջություն շատ փոփոխական է ինքնակարգավորվող լինելու համար: Լավ աջակցություն ունեցող, տեխնիկապես հմուտ, թափանցիկ կանոնակարգման համակարգը կայուն հանքարդյունաբերության և հանքարդյունաբերական թափոնների անվտանգ կառավարման անբակտեյի մասն է:

Առաջին երկու բաղադրիչների հարցը սովորաբար լուծվում է կարգավորող մարմնի կողմից տրամադրվող թույլտվության կամ հավանության և պարտատոմսերի կամ ֆինանսական երաշխիքների տրամադրման միջոցով, որոնք դրվում են կարգավորող մարմնի վերահսկողության տակ հետագա մաքրման աշխատանքների համար և նաև կարգավորող մարմնի կողմից օգտագործման նպատակով այն դեպքում, եթե թույլտվություն ստացած ընկերությունը ենթարկվում է լուծարման:⁶Վերջին բաղադրիչը կարգավորվում է թափոնների կառավարման կառույցների դասակարգման, հեռացման սահմանափակման կամ արգելման միջոցով, հանքարդյունաբերական թափոնների (ինչպիսիք են օրինակ պոչանքները) կրկնօգտագործման և վերամշակման և թափոնների կառավարման հարկերի միջոցով իրականացվող գնային ազդակների օգնությամբ՝ նպատակ ունենալով ընդհանուր վարքագիծ փոխել թափոնների հեռացման փորձում:

Հիմունք 1.Թափոնի տեխնիկական բնութագիրը

Թափոնի տեխնիկական բնույթի գնահատումները լավագույն փորձի դեպքում կատարվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացքում, նախքան ծրագրի վերջնական հաստատումը: ՇՄԱԳ-ի տեխնիկական առաջադրանքը պետք է ընդգրկի մանրամասնորեն նշված պահանջներ հանքի երկրաբանության գնահատման և ապարների երկրատեխնիկական բնութագրության և դրանց երկրաբիմիական վարքի մասին:Առանց այս գնահատման հնարավոր չէ մշակել լիցենզավորման կամ թույլտվության տրամադրման մանրամասն պայմաններ, որոնք կապահովեն, որպեսզի հայտ ներկայացնողը շրջակա միջավայրն ու մարդու

⁶Նման դեպքերին անդրադառնալու նպատակով Քուինսլենդի գլխավոր տեսուչը 2014թ-ին զեկույց է ներկայացրել պետության հսկողության տակ գտնվող ֆինանսական երաշխիքների զգալի անկման մասին: https://www.qao.qld.gov.au/sites/all/libraries/pdf.js/web/viewer.html?file=https%3A%2F%2Fwww.qao.qld.gov.au%2Fsites%2Fqao%2Ffiles%2Freports%2Frtfp_environmental_regulation_of_the_resources_and_waste_industries.pdf: ՄԹ-ում ֆինանսական երաշխիքներ պահանջվում են բոլոր տեսակի հանքարդյունաբերական գործողությունների համար, ներառյալ հանքարդյունաբերական թափոնների հեռացումը: Տես՝ https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/69323/pb13636-ep2010miningwaste.pdf, պարագրաֆ 4.67: Տես նաև՝ *Մնացորդային թույլտվությունների տրամադրման (Անգլիա և Ուելս) կարգավորումներ 2010թ.*:

առողջությունը խոցելի չդարձնի:⁷ Թափոնների դասակարգումը հաճախ այդ նույն թափոններն առաջացնողների պատասխանատվությունն է:

Եվրոպական Միության (ԵՄ) *Հանքարդյունաբերական թափոնների դիրեկտիվի* մեջ թափոնի տեխնիկական բնույթի գնահատումը նկարագրվում է որպես թափոնների բնութագրում արդյունահանողների համար:⁸ Միացյալ թագավորության (ՄԹ) *Բնապահպանական թույլտվության տրամադրման ուղեցույցը* և *Հանքարդյունաբերական թափոններին առնչվող գործողությունների համար լրացուցիչ ուղեցույցը* մեկնաբանում են ԵՄ դիրեկտիվը և տրամադրում իրականացման մանրամասն ուղենիշներ թափոնների դասակարգման համար:⁹ Թափոն առաջացնող ընկերություններից և թափոնների պահպանման կառույցներից պահանջվում է հետևել ուղենիշներում նշված ընթացակարգերին, որպեսզի նրանք կատարեն կիրառվող օրենքների պահանջները և ապահովվի շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանությունը:¹⁰ Առաջնորդվելով Ռեսուրսների պահպանության և վերականգման ակտի կարգավորումներով՝ ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության *SW-846 համառոտագիրը* նկարագրում է թափոնների նմուշառման և անալիզի ենթարկելու 214 վերլուծական մեթոդ:¹¹

Հիմունք 2. Թափոնի ներկայացրած վտանգի բնույթը

Առաջին հիմունքի արդյունքները կորոշեն, թե արդյոք թափոնը պատճառ կհանդիսանա հանքի թթվային դրենաժի /ՅԹԴ/, աղային կամ նատրիումային դրենաժի կամ քիմիական լվացման և մետաղական նյութերի կամ միացությունների կուտակման: Այս հետևանքներից յուրաքանչյուրը տարբեր ազդեցություններ է ունենում ազդակիր շրջակա միջավայրի վրա: Հանքարդյունաբերական աշխատանքների իրականացման համար տրամադրված թույլտվությունը կամ հավանությունը հաճախ մանրամասնորեն անդրադառնում են կոնկրետ հետևանքներին և պահանջում, որպեսզի հայտ ներկայացնողը քայլեր ձեռնարկի դրանք կանխելու ուղղությամբ: Շատ տեղերում դա արվում է հետևյալ կերպ.

⁷Հանքարդյունաբերական թափոնների բնութագրման շուրջ ընդհանուր վերլուծության համար տես՝ <http://www.environmentalearthsciences.com.au/wp-content/uploads/2012/12/Easy-Guide-Mine-Waste.pdf>:

⁸Տես՝ Եվրոպական հանձնաժողովի որոշում 2009/360/EC <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32009D0360>, Եվրոպական խորհրդարանի 2006/21/EC դիրեկտիվի շրջանակում:

⁹Տես՝ https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/69323/pb13636-ep2010miningwaste.pdf և

https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/296493/LIT_8451_eb68e4.pdf:

¹⁰Տես՝ <http://www.epa.nsw.gov.au/resources/wasteregulation/140796-classify-waste.pdf> : Թափոնների տեսակների համար տես՝ <http://www.epa.nsw.gov.au/waste/types.htm> :

¹¹Տես՝ <https://www.epa.gov/hw-sw846/sw-846-compendium>:

1. Ազդակիր շրջակա միջավայրում թույլատրված թունավորության կամ վնասակար ազդեցության մակարդակների չափանիշների սահմանում,
2. Հայտ ներկայացնողից պահանջել իրականացնել հանքի մերձակա հողի և ջրերի ստուգում տարեկան կամ կիսամյակային կտրվածքով և ներկայացնել հաշվետվություն այդ ստուգումների վերաբերյալ, և
3. Սանկցիաներ կիրառել կամ տուգանել հայտ ներկայացնողին այս մակարդակները խախտելու համար

Մեծ նախագծերի թույլտվության համար հայտը հաճախ ներառում է հանրային ծանուցման փուլ, որը հնարավորություն է տալիս հանրությանը ներկայացնել առաջարկություններ թույլտվության այն պայմանների շուրջ, որոնք կիրառվելու են ապարների նկատմամբ համապատասխան հանքավայրում:¹²

Որոշ տեղերում իշխանությունները պահանջում են ներկայացնել թափոնների կառավարման մանրամասն պլան /ԹԿՊ/ նախքան ընդերքօգտագործման թույլտվություն տրամադրելը: Կանադայում ԹԿՊ-ները մշակվում են որպես հաստատման գործընթացի մաս՝ ներառելով թափոնների ամբարման վայրի ընտրությունն ու նախագիծը, ինդրահարույց թափոններին վերաբերող ռազմավարությունները և թափոնների երկարաժամկետ կայունացման հարցը որպես հանքի փակման մաս:¹³ Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգում ԹԿՊ-ները պետք է ներկայացվեն հանքի հաստատումից հետո երեք ամսվա ընթացքում:¹⁴

Հիմունք 3. թափոնների կառավարման լավագույն փորձ

Թափոնների կառավարման ոլորտում տեխնոլոգիաները շարունակ զարգանում են: Տեխնոլոգիական առաջընթացները վերջին երկու տասնամյակում բերել են զգալի փոփոխությունների թափոնների կառավարման գործում: Երկրաբխիական և

¹² Տես, օրինակ, *Շրջակա միջավայրի պահպանության ակտ 1994թ (Qld)* Գլուխ 5, Մաս 4 Բաժին 1, *Քսապահպանական պլանավորման և գնահատման ակտ 1979թ (Ն-ՀՈւ)*, Մաս 4 Բաժին 2, *Քսապահպանական պլանավորման և գնահատման կարգավորում 2000թ (Ն-ՀՈւ)* Մաս 6 Բաժին 5, 6 և 7, պլանավորման թույլտվությունը ՄԹ-ում անպայմանորեն ներառում է տեղական իշխանությունների և հանրության մասնակցությունը հանքարդյունահանման առաջարկի տեղական իշխանության մակարդակով գնահատման միջոցով:

¹³ Օրինակ Նունավուտից /Կանադա/, տես՝ <http://ftp.nirb.ca/03-monitoring/00MN059-JERICHO%20DIAMOND%20MINE/02-MONITORING%20AND%20MANAGEMENT%20PLANS/Landfill,%20Waste%20and%20Hazardous%20Materials/110601-00MN059-Waste%20Management%20Plan.pdf>:

¹⁴ ՆՀՈւ օրինակների համար տես՝ <http://www.vale.com/australia/EN/aboutvale/regulatory-reports/integra-complex-regulatory-information/Management%20Plans/Integra%20Complex%20-%20Waste%20Management%20Plan.pdf> և http://www.glencore.com.au/EN/who-we-are/baal-bone/Management%20plans%20and%20programs/BB%20Waste%20Management%20Plan%202014_FINAL.pdf:

երկրատեխնիկական վերլուծությունների մասին գիտությունը նույնպես զարգացում է ապրում:

ԵՄ-ից պահանջվում է մշակելուղեցույց և փոխանակել տեղեկատվություն թափոնների կառավարման միջոցառումների շուրջ հասանելի լավագույն տեխնոլոգիաների /ՅՆԸ/ մասին, որոնք պետք է կիրառվեն հանքարդյունաբերող ընկերությունների կողմից:¹⁵ ԵՄ ՅՆԸ մասին փաստաթուղթը, վերնագրված *Հասանելի լավագույն տեխնոլոգիաները հանքարդյունաբերության մեջ պոչանքների և ապարների կառավարման համար*, ավելի քան 500 էջով մանրամասն ուղեցույցներ է տրամադրում գրեթե բոլոր հանածոների վերաբերյալ:¹⁶

Ավստրալիայում բնապահպանական թույլտվություն ստացած ընկերությունների կարգավորում իրականացվում է համեմատելով հանքավայրերի շարունակական ստուգման արդյունքում բացահայտվող թունավորության աստիճանները այն չափանիշների հետ, որոնք նրանք պիտի պահպանեն թույլտվությունը ստանալու պահին: Ավստրալիայի իշխանությունները որպես թույլտվության տրամադրման պայմանների մաս շահագործող ընկերությանը նոր տեխնոլոգիաներ և մեթոդներ դիտարկելու մասին պահանջ ներկայացնելու փոխարեն նրանց հայեցողությանն են թողնում օրենքի պահանջներին համապատասխանելու լավագույն և ամենաարդյունավետ ուղիները գտնելը: Կալիֆորնիան նույնպես չի պահանջում ՅՆԸ կիրառում մաքրման պլանների մշակման ընթացքում:¹⁷

Կորպորատիվ հաշվետվողականությունը հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական հետևանքների գործնականում ընդունված ստանդարտն է շատ վայրերում, որտեղ անկախ նրանից, թե ում է պատկանում հանքի սեփականատիրության իրավունքը, հանքարդյունաբերության թույլտվություն ստացած ընկերությունները պատասխանատու են իրենց աշխատանքի արդյունքում պատճառված վնասների, այդ թվում՝ պոչանքներից շրջակա միջավայրին և հանրային առողջությանը հասցված ցանկացած վնասի համար: «Աղտոտողը վճարում է» սկզբունքը նշանակում է, որ հանքարդյունաբերողները պատասխանատու են իրենց գործողությունների արդյունքում հասցված վնասի համար: Սա լավագույն խթանիչն է ման վնասներից ծախսարդյունավետ կերպով խուսափելու համար:

Կանադայի օգտակար հանածոների և մետաղների քաղաքականության մասին փաստաթուղթը ընդգծում է աղտոտումը կանխելու հասկացությունը և ճանաչում է

¹⁵Տես՝ https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/69323/pb13636-ep2010miningwaste.pdf, պարագրաֆ 4.9:

¹⁶Տես՝ http://eippcb.jrc.ec.europa.eu/reference/BREF/mmr_adopted_0109.pdf:

¹⁷Տես՝ #13398.3(e) այստեղ՝ http://www.waterboards.ca.gov/centralvalley/water_issues/mining/water_board_mining_laws_req.pdf:

վերոնշյալ սկզբունքը, որի շրջանակներում շահագործողները պատասխանատու է շրջակա միջավայրի, ինչպես նաև հանածոների և մետաղների տնտեսվարման համար:¹⁸Նույն կերպ, Ավստրալիայի Քուինզլենդ նահանգում *Չանքարոյունաբերական գործունեության նկատմամբ կիրառվող վերականգնման մասին պահանջներ.Ուղենիշներ* փաստաթուղթը հիմնված է «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա, որտեղ, օրինակ, աղտոտվածություն և թափոններ առաջացնողը պետք է կրի դրանց զսպման, դրանցից խուսափելու կամ նվազեցման ծախսերը:¹⁹

Միջազգային չափանիշներ

Չանքարոյունաբերության, հանածոների, մետաղների և կայուն զարգացման շուրջ միջկառավարական ֆորումը /ՄԿՖ/ եզակի գլոբալ հարթակ է 55 անդամ երկրների, հանքարոյունաբերող ընկերությունների և ոլորտի կազմակերպությունների միջև երկխոսության համար: ՄԿՖ-ն նպատակ ունի զարգացնել կայուն զարգացմանը նպաստող լավ կառավարման փորձը և քաղաքականությունները իր *Չանքարոյունաբերական քաղաքականության շրջանակ ընդերքօգտագործման և կայուն պարզացման համար /ՋԸՇ/* փաստաթղթի միջոցով: Որպես իրավական պարտադիր ուժ չունեցող ուղենիշային գործիք, ՋԸՇ-ն շարադրում է հանքարոյունաբերությանը վերաբերվող օրենսդրության և քաղաքականության առումով առկա լավագույն միջազգային փորձը:²⁰ Չանքարոյունաբերական թափոնների կառավարման առումով ՋԸՇ-ն առաջարկում է, որպեսզի կառավարությունները իրականացնեն հետևյալը.

- Ապահովել, որպեսզի այնպիսի կառույցներն, ինչպիսիք են լցակույտերը և պոչամբարները պլանավորվեն, նախագծվեն և շահագործվեն այնպես, որպեսզի երկրատեխնիկական ռիսկերը և բնապահպանական հետևանքները պատշաճ կերպով գնահատվեն և կառավարվեն ողջ հանքարոյունաբերական գործունեության ընթացքում և հանքի փակումից հետո:
- Պահանջել, որպեսզի հայտ ներկայացնողները նախագծեն, շահագործեն և իրականացնեն հանքարոյունաբերական թափոնների կառույցների պահպանումը միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան, և
- Պահանջել, որպեսզի հայտ ներկայացնողները շահագործման ընթացքում պարբերաբար պատվիրեն անկախ փորձագիտական ուսումնասիրություններ և հաշվետվություններ կառավարությանը նախքան կառուցման հաստատումը և նախագծում փոփոխությունների առաջարկելիս:²¹

¹⁸Տես՝ http://www.oag-bvg.gc.ca/internet/English/parl_cesd_201212_02_e_37711.html:

¹⁹Տես՝ <https://www.ehp.qld.gov.au/assets/documents/regulation/rs-gl-rehabilitation-requirements-mining.pdf>, էջ 4:

²⁰ՋԸՇ մասին լրացուցիչ տեղեկության համար տես՝ <http://globaldialogue.info/framework.htm>:

²¹Տես՝ <http://globaldialogue.info/MPFOct2013.pdf>:

Եզրակացություններ և առաջարկություններ

Պատմականորեն, անկախ նրանից՝ հանքարդյունաբերական ժառանգությունը թողնվել է պետական ձեռնարկությունների թե մասնավոր հատվածի կողմից, կառավարություններն են ստիպված եղել վճարել փակվող հանքերի արդյունքում ստացված բնապահպանական և սոցիալական ծախսերի համար: Սակայն ներկայումս փորձը առաջատար երկրներում ցույց է տալիս, որ այս խնդիրներից և դրանց ամնչվող մարդկային ու ֆինանսական վնասներից կարելի է խուսափել: Սա պահանջում է հուսալի կառավարում և պլանավորման գործընթացներ նախքան բուն հանքարդյունաբերական գործունեությունը կամ դրանց դադարեցումից շատ առաջ: Այն նաև պահանջում է, որպեսզի շրջակա միջավայրին վերաբերվող օրենսդրությունը հիմնվի «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա: Ֆինանսական երաշխիքները այս սկզբունքի վառ օրինակն են, քանի որ ծրագրի իրականացման հայտ ներկայացնողից կամ շահագործողից հենց սկզբում ակնկալվում է հոգալ շրջակա միջավայրի, հանքավայրի ռեկուլտիվացման, փակված հանքերի երկարաժամկետ պահպանության և վթարների պատճառով ստացվող վնասների հետ կապված բոլոր ծախսերը (մանրամասների համար տես՝ Աշխատանքային փաստաթուղթ 2):

Հայաստանում թափոնների մասին օրենքը և Ընդերքի մասին օրենսգիրքը շատ վերացական են և պետք է պարունակեն հանքարդյունաբերական թափոնների կառավարմանը վերաբերող մանրամասն կանոնակարգումներ և ուղենիշներ, այդ թվում, օրինակ, նվազագույն տեխնիկական անվտանգության մշտադիտարկում, հսկման և ստուգման մասին պահանջներ և շրջակա միջավայրի գնահատման չափանիշներ: ՏԿԱԻՆ-ում և այլ համապատասխան գործակալություններում չկա տեխնիկական փորձաքննության պատշաճ մակարդակ պոչամբարների կառուցման և կառավարման առումով, որն ունի հրատապ ուշադրության կարիք: Պոչանքների ամբարման կառույցների թույլատրումն ու վերահսկումը կանոնակարգելու բացը լրացնելու համար պահանջվում է կարողությունների զարգացում և վերապատրաստում (մանրամասն առաջարկությունների համար տես Աշխատանքային փաստաթուղթ 5):

Հայաստանի ամերիկյան համալսարան
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Մարշալ Բադրամյան 40,
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
+374-60-612520
crm@aua.am
crm.aua.am

mlri.crm.aua.am

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION